ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2036-Ա «22» մայիսի 2025թ.

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ Հ.78 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԻ ԵՎ 1-ԻՆ ՀԱՐԿԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Ֆեյշընն Սթար» ՍՊ ընկերության տնօրեն Մարատ Դուրգարյանի դիմումը՝ Բաղրամյան պողոտա հ.78 հասցեում, վարձակալության իրավունքով իրեն տրամադրված՝ շենքի նկուղի և 1-ին հարկի համապատասխանաբար՝ 31.4քմ և 108.86քմ մակերեսներով տարածքները /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07032025-01-0099 և հ.14032025-01-0238 վկայականներ/ ենթավարձակալության տալու թույլտվության մասին:

Նշված տարածքները մինչև 2038 թվականի ապրիլի 17-ը վարձակալության իրավունքով տրամադրվել են «Ֆեյշընն Սթար» ՍՊ ընկերությանը, որի հիման վրա 2013 թվականի մայիսի 3-ին կնքվել են հ.2000 և հ.2001 ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերը և 2025 թվականի փետրվարի 20-ին՝ հ.1062 համաձայնագիրը:

Հաշվի առնելով ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրերի 2.3 կետի 2.3.1 ենթակետը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով.

1.Թույլատրել «Ֆեյշընն Սթար» ՍՊ ընկերությանը՝ Բաղրամյան պողոտա հ.78 հասցեում գտնվող շենքի նկուղի և 1-ին հարկի համապատասխանաբար՝ 31.4քմ և 108.86քմ մակերեսներով տարածքները տալ ենթավարձակալության «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությանը (գրանցման համար՝ 282.110.04233, ՀՎՀՀ՝ 00851011):

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ